Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

6

ԲԱՂԵՇԻ ԲԱՆՏՈՒՄ

Բաղեշի բանտը գտնվում էր Կարմրակից վերև մի բարձր քարաժայռի վրա:

Շատերն էին տանջվել այգ բանտում, ինձ էլ բախտը պատանի հասակից նետեց այնտեղ: Ոստիկանը ծոծրակիս մի հարված տալով, ինձ հրեց բանտի միջանցքը, ուր մի գիրուկ տղամարդ իմ անունը մուտքի հաշվեմատյանի մեջ առնելով՝ նույն ոստիկանի հսկողությամբ իջեցրեց բանտի նկուղը:

Այգտեղ նստած էր դահճապետ Ռասիմ էֆենդին:

Միե Չաուշ և Ռասիմ էֆենդի: Մուշ քաղաքում և Բաղեշում չկար մեկը, որ այս հրեշների անունը լսած չլիներ: Առաջինը Մշո բանտի դահճապետն էր, իսկ երկրորդը՝ Բաղեշի: Այս երկուսը իրենց ճարպիկ գործակալների միջոցով հայ, քուրդ և ասորի ապստամբներին որսալով բերում լցնում էին բանտերը:

Ոսկրոտ, մազոտ թևերով և առնետանման դեմքով մի հաստլիկ պաշտոնյա էր Ռասիմ էֆենդին: Լսել էի, որ սա, երբեմն, առանց դատ ու դատաստանի, կալանավորի ձեռքը բահ ու բրիչ տալով, ստիպում էր իր սեփական գերեզմանը փորել և ետևից կրակելով՝ նետում էր այդ փոսի մեջ:

Արաբոյի տուփը ինձ մոտ էր և ես վախենում էի, որ եթե խուզարկվեմ՝ իմ փոսն էլ պատրաստել կտա:

Ռասիմը ձեռքը տարավ իմ ծոցը և ծխատուփը հանելով, չարախնդությամբ նայեց ինձ.

Պապիս ծխատուփն է, ասացի:

Նա տուփը ուշադիր զննեց և տեսնելով, որ մի առանձին արժեքավոր իր չէ, ետ տվեց ասելով՝

Պահիր պապիդ տուփը: Իսկ հիմա, գյավուր օղլի գյավուր, պատասխան տուր ինձ, թե դու առավոտ վաղ ի՞նչ գործ ունեիր Կարմրակ վանքի գերեզմանի վրա: Դու գիտես, որ այնտեղ գլուխն է թաղված մի անհավատի, որ անհամար չարիք է գործել մեր սուլթանի տերությանը: Եվ լավ իմացիր, սուլթանի թշնամին իմ թշնամին է: Սա այն բանտն է, որտեղ ձեր քարոզիչ Միհրան էֆենդին է նստել: Ձեր սազանդար Դարդիման Սաքոն և ճիպրանցի աղան էլ այստեղ էին, որոնց ես նվեր ուղարկեցի Մհե Չաուշին: Նա ուրիշ անուններ էլ տվեց, որ չեմ հիշում: Ու առանց իմ պատասխանին սպասելու, ինձ բերող ոստիկանի օգնությամբ իմ ձեռքերը ոլորելով կապեց մեջքիս և իմ վիզը մի հաստ պարան անցկացնելով, օղը միացրեց առաստաղի երկաթե ձողին: Ապա ոտքերիս տակից աղյուսը հեռացնելով, ղեյլանը վառած նստեց դեմս: Տեսնելով, որ խեղդվում եմ, ես ճիգ արեցի բթամատներիս կանգնել: Այդ բանը նկատելով, նա պարանը նորից ձգեց: Իմ երեսը կարմրեց և լեզուս երկու հալաբի դուրս ընկավ: Էդ է, պետք է շունչս փչեի, մոտենալով պարանը քանդեց և ես ուշագնաց ընկա հատակին:

Առավոտյան Ռասիմ էֆենդին նույն ոստիկանին և մի հսկիչի կանչելով՝ ասաց.

Սրան բարձրացրեք մանազկերտցի վարժապետ Ավետիսի մոտ:

Ինձ վերև տարան:

Բանտի բոլոր խցերը և երկայն միջանցքը լցված էին կալանավորներով: Մեծ մասը հայ գյուղացիներ էին՝ մազակալած երեսներով: Աջ թևի վրա մի սրահ երևաց, ուր երկու թուրք բանտարկյալ չոքած աղոթում էին՝ երեսները դեպի

պատը:

Միջանցքով անցնելիս բոլորը շուռ գալով զարմացած նայում էին, թե ուր են տանում ինձ այդ ատելի ոստիկանը և հսկիչը:

Միջանցքի վերջավորությանը մի առանձնացած խուց կար երկաթե սողնակով, որի առաջ մի թուրք հսկիչ նստած դռան ա՛նցքից նայում էր ներս: Մի ուրիշ հսկիչ նրա ուսերի վրայով թեքված, նույնպիսի հետաքրքրությամբ դիտում էր, թե ինչ է կատարվում ներսում:

Մեր ոտնաձայնն առնելով, երկուսն էլ շուռ եկան: Ոստիկանի ազդանշանով առաջին հսկիչը անմիջապես երկաթե սողնակը քաշեց: Դուռը բացվեց: Ես ներս մտա և դուռը ծանրորեն փակվեց իմ ետևից: Դա մի նեղլիկ խուց էր, փոքրիկ լուսամուտով: Պատի երկայնքով մի թախտ էր դրված՝ կուժը կողքին և վրան մի գիրք: Ղուրանն էր: Մի տղամարդ թախտին ծալապատիկ նստած ինչ-որ բան էր գրում: Այնքան կլանված էր իր գրությամբ, որ գրեթե իմ ներս մտնելը չիմացավ, կամ չուզեց նկատած լինել:

Ես անաղմուկ մոտեցա և նստեցի թախտի ծայրին: Նա հանկարծ մի երկար չոր հայացք նետեց վրաս: Ապա գրչածայրը թաթախեց սև մելանի մեջ և գլուխը իջեցնելով շարունակեց գրել:

«Ուրեմն սա է մանազկերտցի վարժապետ պարոն Ավետիսը», մտքումս ասացի: Ու՞մ էր նամակ գրում և ինչու՞ էր գրում: Մի՞թե սուլթանի բանտում կալանավորին հնարավորություն են տալիս նամակ գրելու: Գրում էր, բայց տեղ կհասնե՞ր այդյոք իր գրածը:

Սարսափելի նեղվածք էր բանտում և այդ սուղ պայմաններում պարոն Ավետիսին բարեհաճորեն հատկացրել էին մի առանձին խուց՝ փոքրիկ թախտով և ջրով լիքը կուժը կողքին: Ղուրանն էլ կար: Ուրեմն արտոնել էին նաև գիրք կարդալ: Ես այն բախտավորներից էի, որ առաջին անգամ բանտ նետվելով, տեղ էի գրավել պարոն Ավետիսի կողքին՝ դրվելով անհամեմատ նախանձելի պայմանների մեջ:

Բանտախցի լուսամուտից երևում էին Բաղեշի լեռները Խաչիկ սարն ու Ծապերկարը, իսկ դեպի հարավ-արևմուտք մի նեղ բացվածքի միջով տարածվում էր այն հարթությունը, որ ընդարձակվելով դեպի Տավրոսի ստորոտները, կոչվում էր Մշո դաշտ:

Կարմրակ վանքը չէր երևում: Խոր կիրճի մեջ վեր էր խոյանում միջնադարյան բարձրապարիսպ մի ամրոց, որի կողերին զարկվելով թնդում էր քաղաքի որոտաձայն գետակը: Տները շինված էին գետակի ժայռոտ եզերքներին և ձորի հատակից դեպի շրջակա լեռները ելնող բլուրների վրա: Բարձրադիր տների տանիքների վրայով և պարտեզների միջով դեպի ձորն էին խուժում տասնյակ կապտաջուր քարվեժներ:

Ամրոցի ուղղությամբ դեպի արևելք, որ Թաղի Գլուխ էր կոչվում, կանգնած էր եռահարկ մի շինություն՝ ճաղավոր պատշգամբով և քարե ոլորապտույտ աստիճաններով: Բոլոր տները թուխ քարից էին, իսկ այս շինությունը շիկավուն ժայռաքարից էր և ճակատին խոշոր տառերով գրված՝ «Խաչ Մանուկ»:

Ուրիշ երևելի տներ էլ կային, որոնցից մեկը ձորի մեջ էր, իսկ մյուսը Ավելի մեյդան կոչվող բարձունքի վրա: Մեկի ճակատին հեռվից դժվարությամբ կարդացի «Շեկ Մելիքի տուն», մյուսի ճակատին՝ «Սարոյենց Արմենակի տուն»:

Խաչմանուկյանների ապարանքի ճաղավոր պատշգամբում երևաց մի գեղանի նորահարս: նա կռացավ նայեց դեպի ձորը, նայեց պարսպապատ ամրոցին, մտածկոտ հայացք նետեց մեր բանտի վրա և արագությամբ ներս գնաց:

Իմ բախտի մասին էի մտածում, երբ նկատեցի, որ պարոն Ավետիսը գրում էր արաբական մանր տառերով և ամեն բառի վրա երկար խորհելով: Ձգված ծալապատիկ դիրքը, համակ կենտրոնացած ուշադրությունը և զարմանալի անհոգությունը իմ նկատմամբ՝ իմ մեջ կասկած առաջացրին, որ այդ նամակ գրողը հասարակ մահկանացուներից չէր, ոչ էլ շարքային կալանավոր: Ոչ թե հայերեն, այլ արաբերեն տառերով էր գրում պարոն Ավետիսը: Ոչ, այդ նամակը նույնպես սովորական նամակներից չէր: Այն անպայման տեղ կհասներ, քանզի գրվում էր մեծ տառապանքով, մեծ նպատակի և առաքելության համար:

Պարոն Ավետիսը Մանազկերտի Իկնա գյուղի մեծահարուստ տներից էր: Այդ տունը ամեն տարի մեծաքանակ կաշառք էր տալիս հասնանցի քրդերին և Բաղեշի կուսակալին:

Կուսակալի մեկ հրամանով պարոն Ավետիսին վերստին ձերբակալել էին և բերել բանտ: Մի քանի անգամ խոշոր գումարներ տալով նա ազատվել էր բանտից, բայց այս անգամ շատ ամուր էր նստած, որովհետև հրաժարվել էր պահանջված կաշառքը վճարելուց:

Նա այժմ կաշառքից ավելի մեծ և կարևոր բան էր խոստանում Բաղեշի կուսակալին և սուլթան Համիդին: Վերջնականապես համոզվելով, որ կաշառքին վերջ չի լինի և անկարելի կլինի այդ միջոցով հագեցնել սուլթանի անկուշտ պաշտոնյաներին, պարոն Ավետիսը որոշել էր հավատափոխ լինել, ընդունել իսլամը և դառնալ ռոմի-սելջուկ տիրության պաշտոնյա: Դրանով նա ոչ միայն Մանազկերտի իր նահապետական տունը կազատեր հարստահարությունից և աքսոր նետվելու մշտական սպառնալիքից, այլև օգտակար կլիներ իր հայրենակիցներին: Սուլթան Համիդը և Բաղեշի կուսակալը այդ շրջանում շատ մեծ կարևորություն էին տալիս հայ ֆիդայիների դեմ պայքարելու գործին: Պարոն Ավետիսը հավատափոխ լինելով և թուրքական մի անուն որդեգրելով, ուրախ կլիներ, եթե իրեն արտոնվեր մի հասարակ ոստիկանի պաշտոն:

Երբ դիմումը ավարտեց, առանց իմանալու, թե ես ով եմ, առանց հարց ու փորձ անելու իմ բանտարկության հանգամանքների և բանտի ներքնահարկում կրած չարչարանքների մասին, գրիչը դրեց ականջակոթի ետև և թուղթը աչքերի դեմ պահելով՝ բարձրաձայն կարդաց. «Տեր կուսակալ, ինձանից պահանջված դրամը իբրև մի հասարակ գյուղացի անկարող եմ վճարելու և իբրև մեր օսմանյան գահին հավատարիմ անձ, պարտական եմ ինքս ինձ նվիրաբերելու իմ պետությանը և մինչև կյանքիս վերջը հավատարմորեն ծառայելու նրան: Տվեք ինձ ոստիկանության պաշտոն և ուղարկեք ապստամբների կենտրոնատեղին՝ Մուշ: Ես այնտեղ պիտի կարողանամ երևան հանել բոլոր վնասակար անձերը: Ահա իմ անձնազոհության առաջին ապացույցը իսլամության կրոնքը կընդունեմ»:

Ապա ծունկի գալով, երեք անգամ խոնարհություն արեց ղուրանի վրա:

Ինչի՞ համար ինձ գետնահարկից հանելով բերել էին պարոն Ավետիսի բանտախուցը: Արդյոք պատճառը այն չէ՞ր, որ այդ վարժապետի օրինակին հետևելով, ես էլ հավատափոխ դառնայի՝ ընդունելով իսլամության կրոնքը: Ես երիտասարդ էի և ինձ բերել էին մի փորձված դաստիարակի մոտ:

Պարոն Ավետիսը ղուրանը ձեռքին իջավ թախտից և դուռը ներսից ծեծեց, որ նշանակում էր, թե դիմումը պատրաստ է: Իսկույն ներս մտան բանտի կառավարիչը և Ռասիմ էֆենդին և նրան բանտախցից հանելով՝ առաջնորդեցին ընդհանուր սրահը, ուր հավաքված էին բոլոր հայ բանտարկյալները: Ինձ էլ տարան:

Սրահի չորս կողմը զինյալ ոստիկաններ էին հսկում:

Պարոն Ավետիսին կանգնեցրին կալանավորների մեջտեղ մի սեղանի վրա և նա, ի տես ամենքիս, բարձրաձայն կարդաց Բաղեշի կուսակալին ուղղած դիմումը: Վերջաբանին ղուրանը բարձրացնելով դեպի ճակատը՝ երեք անգամ համբուրեց:

էֆերիմ, ասաց բանտի կառավարիչը և պարոն Ավե– տիսին մի քանի ոստիկաններով բանտից հանելով, դահճապետ Ռասիմ էֆենդու ուղեկցությամբ առաջնորդեց Բաղեշի կուսակալի մոտ:

Կրոնքի և ազգի դավաճան, բղավեցին բանտարկյալները հայությունից դարձած վարժապետի ետևից:

Ստոր հավատափոխ, գոչեցի ես ոստիկանի և երկու պահակների հսկողությամբ իմ բանտախուցը վերադառնալով:

Հետևյալ առավոտ բանտում լուր տարածվեց, որ Բաղեշի կուսակալ Ֆերիկ փաշան սիրահոժար ընդունել էր պարոն Ավետիսի առաջարկը, նրա անունը կնքել էր Մեհմեդ Խալըթ և ոստիկանի պաշտոնով ուղարկել էր Մուշ՝ հայ ապստամբների դեմ պայքարելու: Ուրեմն միանգամայն ստույգ էր իմ կասկածը: Նրանք ինձ ձեղնահարկից բարձրացրել էին երկրորդ հարկ և դրել մանազկերտցի վարժապետի մոտ, որ նրա օրինակին հետևելով, ես էլ հավատափոխ դառնայի և պատանի հասակից գնայի ծառայելու սուլթանի

գահին:

Բայց իմ ճանապարհը ուրիշ էր:

Այդ նույն գիշերը ես խախտելով իմ բանտախցի վեց– յոթ աղյուսները և իմ մարմնի համար բավականաչափ լայն մի անցք բանալով, լուսադեմին զգուշությամբ ներքև սահեցի Բաղեշի բանտից:

ԽՈՒԹԵՑԻ ՋՈՐԵՊԱՆԻ ՀԵՏ

Բաղեշից դեպի Դաշտի գյուղերը մի մարդ էր գնում բարձած ջորին առաջին: Իմ բախտից ջորու կապը քանդվեց և վրայի բեռը շուռ եկավ: Թե ինչ կար մեջը՝ չիմացա: Միայն այն նկատեցի, որ ջորեպանը հուսահատորեն այս ու այն կողմը նայեց, կարծես մարդ էր փնտրում բեռը բարձրացնելու: Ես վազելով հասա և տիրոջը օգնելով, բեռը դրեցինք գրաստի մեջքին ու պարանը ամուր ձգելով կապեցինք փորատակին:

Ծանոթացանք: Ջորեպանի անունը Երանոս էր:

Կարելի է ընկերանալ, հարցրի:

Ինչու չէ, միասին գնանք, ասաց քեռի Երանոսը: Նա ամենևին կասկած չտարավ, որ ես փախստական եմ և շատ ուրախացավ, որ ճանապարհի ընկեր ունի: Քաղցած էի. հաց ուներ մոտը, ինձ հաց տվեց, մի քիչ էլ՝ չամիչ, որ հավանորեն Բաղեշի շուկայից էր առել:

Ջորին առջևից էր գնում, իսկ մենք ետևից:

Բաղեշից դեպի դաշտ գնացող ճանապարհը մի խճուղի էր, որ տանում էր դեպի Մուշ: Չգիտեմ ձեզանից ով է գնացել այդ ճանապարհով, կամ մեկնումեկը ձեզանից բախտ կունենա՞ երբևիցե նրանով գնալու, բայց դիպվածն այնպես բերեց, որ ես մինչև Խութա սարերին հասնելը անցա այդ ճանապարհով և այն էլ մի ջորեպանի ընկերակցությամբ:

Յատուկ Պոէմ

Բաղեշը վաղուց մնացել էր ձորի մեջ իր Կարմրակ վանքով և բարձրապարիսպ ամրոցի կողերին հարվածող որոտաձայն գետակով: Կիրճի մեջ էին մնացել քարաժայռին կանգնած Մուշի բանտը և Խաչմանուկյանների շքեղ ապարանքը՝ ճաղավոր պատշգամբով:

Չամիչ ուտելուց սաստիկ ծարավել էի: Ջորեպանն ասաց, որ շուտով ինձ կտանի մի սառնորակ աղբյուրի վրա: Եվ իսկապես, շատ չանցած, մի հրաշալի աղբյուրի վրա հանեց ինձ քեռի Երանոսը:

Դա Մեղրագետի ակունքն էր:

Մեղրագետի ակը լճաձև է, ջուրը՝ արտասուքի նման զուլալ, և գոյանում է Նեմրութ լեռան գագաթի ծովակներից: Այգ ջրի մասին ասված է.

«Մուշից դեպի Բաղեշ և Բաղեշից դեպի Մուշ գնացողը այն ժամանակ կհոգնի, եթե Մեղրագետի մոտով անցնելիս կմոռանա խմել նրա ակունքից»: Ես չէի ուզում հոգնել, որովհետև երկար ճանապարհ ունեի գնալու և կռանալով խմեցի նրա ջրից: Միշտ ախորժելի է այն ջուրը, որ ակունքից ես խմում:

Ջորեպանն էլ խմեց:

Հնում այս ակունքի տեղը մի թոնիր է եղել, ասաց քեռի Երանոսը ջորին շարժելով: Գյուղի երեցկինը հաց թխելիս է լինում, մի աղքատ մարդ գալիս է և երեցի կնոջից մի հաց է խնդրում՝ ի սեր Քրիստոսի: Տիրուհին տալիս է հացը: Աղքատը նույն աղերսով մի կտոր պանիր է ուզում:

Երեցկինը պանիր էլ է տալիս: Աղքատը Քրիստոսի սիրո համար մի համբույր է խնդրում: Տիրուհին իր սիրուն երեսը մոտեցնելով թույլ է տալիս, որ իրեն համբուրի: Այդ միջոցին ներս է մտնում երեցը: Նա կնոջը զայրացած հարցնում է համբույրի մասին: Երեցկինը ասում է, թե այդ մարդը Քրիստոսի սիրո համար հաց խնդրեց՝ տվեցի, պանիր խնդրեց՝ տվեցի: Վերջում Քրիստոսի սիրո համար մի համբույր խնդրեց՝ չկարողացա մերժել. համբույրն էլ տվեցի: Քահանան բարկացած ասում է կնոջը՝ Քրիստոսի սիրո համար քեզ գցիր էս բարկ թոնրի մեջ: Երեցկինը իրեն նետում է թոնիրը: Թոնիրը իսկույն լցվում է մեղրահամ ջրով:

Տիրուհին դառնում է ձուկ և սուզվում գետի ակունքը, և գետն էլ այդ օրվանից կոչվում է Մեղրագետ:

Այդ գեղեցիկ ավանդավեպով մենք հեռացանք Մեղրագետի ակունքից: Բավական առաջացել էինք, երբ քեռի Երանոսը ձեռնափայտի թեթև հարվածով ջորու գլուխը շուռ տվեց դեպի մի բարակ ոտնուղի: Ավելի շուտ ջորին ինքը ընտրեց այդ ուղղությունը:Այդ կենդանին զարմանալի բնազդ ունի. արագ ընտելանում է մի անգամ անցած ճանապարհին: Սովորաբար ջորու գլուխը ձիու գլխից խոշոր է, ականջներն ու պոչը հիշեցնում են ավանակին, իսկ սրունքները՝ ձիուն: Բայց քեռի Երանոսի ջորին անհամեմատ փոքր էր, իսկ սրունքները զգալիորեն կարճ: Միայն պոչը և երկայն ականջներն էին հիշեցնում, որ նա ջորի է:

Ընթացքի ժամանակ պարզվեց, որ իմ ուղեկիցը գնում էր Մարաթուկի կողմերը: Ընկույզի կոճղեր էր տարել Բաղեշ վաճառելու և այնտեղից կերպասեղեն և չիթ էր տանում սասունցիների համար:

Ավզուտի սարը անցնելով մենք մտանք Խութ: Սկսվեց մեր դժվարին վերելքը: Ջորին գնում էր քարքարոտ անտառի եզրով: Կճղակների տակից գորշագույն քերծեր պոկվելով, թեթև աղմուկով գլորվում էին անդունդ: Որքան բարձրանում էինք, այնքան ճանապարհը նեղանում էր, ձգվելով մերթ սաղարթախիտ կաղամախիների միջով, մերթ աննկատ սահում լորենուց խռռված կարմրատերև նորքենու կողքով և մերթ կայծակնահար ընկուզենու արմատների վրայից դժվարությամբ ցատկելով, անհետանում վիհին կռացած մանրատերև սալորենու տակ:

Ջորին սկսեց դանդաղ քայլել: Այդ տոկուն կենդանին միակ հուսալի բեռնակիրն է վտանգավոր անցուղիներին:

Այնպիսի վերընթաց զառիթափ էր, որ չորին երբեմն ընդունում էր ուղղահայաց դիրք, գրեթե կանգնելով ետևի ոտքերին: նորանոր քերծեր էին պոկվում, բայց նա օդում թռիչք գործելով զգուշությամբ որսում էր ապահով հենակետ և առջևի ոտքերը այնտեղ տեղափոխելով՝ պատրաստվում էր երկրորդ թռիչքին: Ջորեպանը տեսնելով, որ դրությունը վտանգավոր է, մի կերպ առաջ անցավ և

գրաստի օղակապից բռնելով սկսեց ընթանալ անդնդի եզրով: Գնում էինք, քեռի Երանոսը՝ առջևից, ես՝ ետևից, շորին՝ մեջտեղից: Ուղղակի զարմանք էր, որ բեռը չէր քանդվում, այնքան ամուր էր կապված:

Սալորենու տակ մոլորված կածանը վերստին հայտնվեց, իջավ, բարձրացավ անտառի կողերով և դարձյալ խճճվելով մենավոր մի տանձենու հողմահար սաղարթների մեղ, շնչակտուր դեմ առավ մի լերկ քարափի:

Բայց ես պետք է բաժանվեի իմ ջորեպանից: Նա գնում էր Սասուն, իսկ իմ այնտեղ գնալը ավելի երկյուղալի էր, քան անդունդների եզրով քայլելը: Չէ որ ես Սասունից էի գնացել Բաղեշ: Ինձ կարող էին նկատել և բանտ առաջնորդել նորից:

Այս մտքերի մեջ էի, երբ ջորեպան Երանոսի խոլինջը բռնեց: Նրա մեջքի մկանները հանկարծ բռնվեցին, սկսվեց ուժեղ փորացավ և նա գրաստի պարանը թողնելով, ուժասպառ նստեց մի քերծի, կարծես մեջտեղից կիսված: Այս բանը հաճախ է պատահում երկար ճանապարհ գնացողների հետ:

Ես ինձ չկորցրիք Ջորին քաշեցի քարափի տակ: Հիվանդի թևերը իսկույն խաչաձև ծալեցի կրծքին և ետևի կողմից թաթերը դեպի մեջքը շուռ տալով, մի ծունկս մեջքի մի կողմին դրած, մյուսը՝ մյուս կողմին՝ ամուր ձգեցի: Թիկունքից մի քանի անգամ ուժեղ ճարճատյուն լսվեց: Ջորեպաճի ցավը անցավ և մենք շուտով ելանք ոտքի:

Քարափը շուռ էինք գալիս, երբ մեր ճակատին երևաց Ծովասարը:

Է՛, ջուխտակ գլուխ Մարութա սար, տխրու՞մ ես առանց զոքանչի, հանկարծ բացականչեց քեռի Երանոսը, շեշտ նայելով դիմացի բարձր լեռան, որի մեծ գագաթը Ծովասարի թիկունքից ուղիղ կախված էր մեզ վրա:

Ես հետաքրքրվեցի, թե դա ինչ բան է:

Քանի որ դու իմ խոլինջը կոտրեցիր և մենք շուտով բաժանվելու ենք, ես քեզ կպատմեմ Մարութա սարի և նրա զոքանչի պատմությունը:

Սասունում փեսայի համար ամենասիրելի անձը զոքանչն է, ասաց Երանոսը, ջորու փորատակի կապը թեթև ամրացնելով: Մի նորափեսա իր զոքանչի և խնամիների հետ ուխտի է գնում Մարաթուկ: Վերադարձին նա իր զոքանչին խնդրում է խնամիների հետ մի քիչ առջևից գնալ, որ ինքը առանձնության մեջ սրտի խոսք ասի Մարութա սարին: Երբ փեսան տեսնում է, որ բոլորովին մենակ է մնացել, ետ դառնալով երկար նայում է այդ լեռան և բացականչում. «Է՛ , մեռնիմ քրզի, ջուխտակ գլուխ Մարութա սար, դու անզոքանչ իմա՞լ կմնաս հուտա»:

Այս խոսքերով էլ ջորեպան Երանոսը վերջացրեց իր զրույցը և մենք բաժանվեցինք: Նա ջորու առաջ ընկած մեկնեց դեպի Սասուն, Մարաթուկի կողմերը, իսկ ես Ծովասարի լանջերով շարժվեցի դեպի Բռնաշեն: